ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. հունիսի 21-23-ը Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Զարմինե Զեյթունցյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Թբիլիսի (Վրաստան), 2017 թվականի հունիսի 21-23-ը

4. Գործուղման նպատակը՝

GIZ-ի «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՀ ՄԿՈՒ) ծրագրին նվիրված աշխատաժողովին մասնակցություն:

5. Քննարկված թեմաները՝

Այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- ծրագրի հիմնական նպատակներն ու միջամտության ոլորտները, ինչպես նաև համագործակցությունը գործընկեր նախարարությունների, մասնավորապես՝ ծրագրի քաղաքական գործընկեր, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ: Հայաստանում ծրագիրն աջակցելու է «կանաչ» և ընդգրկուն զարգացմանը հետևյալ ոլորտներում՝ զբոսաշրջություն, գինեգործություն և ճշգրիտ ճարտարագիտություն/SS:

- հանրային-մասնավոր հատված համագործակցային մոդելի ամրապնդումը Հայաստանում
- հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու զարգացման, մրցունակության և սոցիալական համախմբվածության ապահովմանն աջակցելը

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության մոդելները հստակեցնել, ապա հստակ ծրագրեր կազմել այդ մոդելներին համապատասխան:
- Ներկայացվել է մշակված գործընթացների շրջանակը և պայմանավորվածություն է ձեռք բերվել դրա հետագա իրականացման շուրջ ազգային և տարածաշրջանային մակարդակներում:

7. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ՝ Զարմինե Զեյթունցյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

26 հունիս, 2017թ.: